ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐ

1978 թ. մայիսի 17-ին Հռոմում, 92 տարեկան հասակում մահացավ գերմանացի անվանի պրոզ, բանաստեղծ ու հրապարակախոս, հումանիստ, հայ ժողովրդի ազնիվ բարեկամ Արմին Վեգները։

1915 թ. արևմտահայության գենոցիդի օրերին Արմին Վեգները գտնվում էր Միջագետքի ռազմաճակատում, Ֆոն դեր Գոլցի բանակում, որպես սանիտարական սպա։ Նա միաժամանակ գերմանական մի քանի թերթերի ռազմական թղթակիցն էր։ Վեգներն ականատես եղավ արևստահայության զանգվածային տարագրությանը և կոտորածներին, գաղտնորեն գրի առավ իր տպավորություններն ու լուսանկարեց երկու հազարից ավելի դժոխային տեսարաններ։ Սա խորապես ապրում էր հայ ժողովրդի անասելի ողբերգությունը։

Իր հուշերում, նկարագրելով Պոլսից դեպի Բաղդադ անցած ճանապարհը, Ա. Վեգներն ընդգծում էր. «Ամեն անգամ, դադարի ժամանակ, երբ առիթ էր լինում, հեռանում էի մեր թուրք և գերմանացի ուղեկիցներից, դիմում մոտակա հայ տարագիրներին և ջանում զոտեպնդել նրանց, բայց մի քիչ դեղորայք բաժանելուց բացի ուրիշ բան չէի կարող անել. Հալեպի մոտ, բծավոր տենդից մահացած հարյուրավոր կանանց և երեխաների դիակները ծածկում էին դաշտերը»։ Այնուհետև Վեգները պատմում է, որ Հալեպի կուսակալը հեռագրում է Պոլիս, ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային. «Հայ տարագիրների կարավանները Հալեպ հասան։ Ի՞նչ պետք է անել»։ Թալեաթը պատասխանում է. «Տեղահանության նպատակը ոչնչացումն է»։

Նկարագրելով արևմտահայ տարագիրների մասսայական սովամահությունը, Վեգները գրում էր, որ գերմանացիները, թուրքերի աչքին կասկածելի չերևալու համար չէին մոտենում հայերին, որովհետև հայերի վիճակով հետաքրքրվող ամեն անձ անվստահություն էր ներշնչում նրանց։ «Անձնական վտանգը անտեսելով,— շարունակում է նա,— ես միշտ հայերի հետքերին կհետևեի, առանց, սակայն, մեծ բան կարենալ անելու։ Անմխիթար կարտասվեի նրանց ցավերով, ամոթով կհեռանայի այդ վայրերեն, ներքնապես անիծելով մարդկային անգթությունը»։

1916 թ., երբ Վեգները Հալեպի վրայով Պոլիս վերադարձավ, գրեց հետևյալ տողերը. «Տասնյակ հաղարավոր տարագիրներեն, որոնք Մրթի ճանապարհին վրանների տակ տեսած էի, մի քանի հարյուրներ էին միայն մնացել։ Անապատի մեջ՝ դիակներ և դիակներ»։

Վերադառնալով Գերմանիա, Վեգները բողոքի հոդվածներ տպագրեց գերմանական թերթերում, հանդես եկավ մի շարք զեկուցումներով, որոնցում նա նկարագրում էր թուրք բարբարոսների



ոճրագործությունները, ցուցադրում ջարդերի զարհուրելի տեսարանները պատկերող իր նկարահանումները։

Վեգներն իր բողոքի ձայնը միացրեց Անատոլ Ֆրանսի, Վիկտոր Բերարի, Բրայսի, Ռոմեն Ռոլանի, Մաքսիմ Գորկու, Յուրի Վեսելովսկու, Վայերի Բրյուսովի, Լեպսիուսի, Նանսենի և այլ հումանիստների ձայնին։

Մի խումբ գերմանական առաջադեմ գործիչներ, այդ թվում Արմին Վեգները, հանդես եկան կոչով, որով դիմում էին կայսերական կառավարությանը, վերջինիս առաջարկելով ներգործել երիտթուրքական ղեկավարների վրա՝ հայերի զազանային ոչնչացմանը վերջ դնելու համար։ Հիշյալ կոչը բռնագրավվեց գերմանական իշխանությունների կողմից։ Ա. Վեգները, չվախենալով թուրքական և գերմանական իշխանությունների հետապնդումներից, բաց նամակով դիմեց Ամերիկայի Միացյալ Նահանգների պրեզիդենտ Վուդրո Վիլսոնին՝ նկարագրելով արաբական անմարդաբնակ անապատը տարագրված հայերի ալետալի վիճակը։ Նամակը

հրատարակվեց առանձին գրքույկով և արտատպվեց եվրոպական բազմաթիվ թերթերում։ Վեգները նկարագրում էր թուրքերի վայրագությունները, տարագիր հայերի անասելի տանջանքները, զանգվածային ջարդերի տեսարանները։

Արմին Վեգների գրչին է պատկանում «Անդարձ ճանապարհ» խորագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն, որը նվիրված է հայկական ջարդերին։ Նա ունի նաև հայկական հարցին վերաբերող մի շարք անտիպ աշխատություններ, որոնց մի մասը, որքան մեզ հայտնի է, տպագրության է պատրաստվում Արևվելյան Գերմանիայում։

1927 թ. Արմին Վեգներն իր կնոջ հետ գալիս է Մոսկվա՝ մասնակցելու Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության տասնամյա հոբելյանի տոնակատարությանը։ Մոսկվայից հետո նա այցելում է Երևան, որտեղ մնում է ամբողջ երկու ամիս։ Երևանում Վեգներն ուսումնասիրում է պատմական հուշարձանները, մոտիկից ծանոթանում և ոգևորվում վերածնված ժողովրդի նվաճումներով։ Նա նյութեր է հավաքում հայերի մասին նոր աշխատություններ գրելու համար, Երևանում հանդես է գալիս գերմանական գրականության տարբեր հարցերին նվիրված մի շարք դասախոսություններով։

Գերմանիայում ֆաշիզմի արյունալի տիրապետության հենց առաջին տարին Արմին Վեգները նետվեց բանտ։ Նրա գրքերը, մյուս առաջադեմ գործիչների գրքերի հետ, հրապարակայնորեն հրկիզվեցին։ Բավական ժամանակ Վեգների անունը անհետացավ հրապարակից, լուր տարածվեց, որ նա զոհ է գնացել ֆաշիստական տեռորին։ Միայն 1952 թ. պարզվեց, որ Հովհաննես Ջիլբերտ անունով գրողն ինքը Վեգներն է, որը երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ֆաշիզմի ճիրաններից փրկվելու համար գաղտնի անցել էր Անգլիա։ Պատերազմից հետո Վեգներն Անգլիայից տեղափոխվում է Իտալիա և մշտական բնակություն հաստատում Հռոմում։

Ա. Վեգները երկրորդ անգամ Հայաստան եկավ 1968 թ.։ Երևանում հանդիսավորությամբ նշվեց հայ ժողովրդի անկաշառ բարեկամի 80-ամյակը։ Նա այցելեց եղեռնի հուշարձանը և ծնկաչոք խոնարհվեց նրա առջև։ Վեգները դասախոսություններ կարդաց Երևանի պետական համալսարանում, մի շարք հանդիպումներ ունեցավ հայ մշակույթի գործիչների հետ, եղավ Էջմիածնում, Մատենադարանում, Գառնի-Գեղարդում և այլ տեսարժան վայրերում։

1972 թ. Արմին Վեգները մեկնում է Ամերիկայի Միացյալ Նահանգներ, որտեղ նա հայ ժողովրդի ողբերգական անցյալին և վերածնված, ծաղկուն ներկային նվիրված դասախոսություններ է կարդում մի շարք համալսարաններում և հայկական շրջանակներում։ Հայ ժողովուրդը միշտ վառ կպահի Արմին Վեգների անմար հիշատակը։

Պրոֆ. Ե. Ղ. ՍԱՐԳՍՅԱՆ